

**Հայաստանի Հանրապետության կառավարության
2016 թվականի օգոստոսի 11-ի N 827-Ն որոշման
մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ
կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«-----» «-----» 2017 թվականի N -Ն

Հայաստանի Հանրապետության ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ

**օգոստոսի 11-ի n 827-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի n 493-Ն և n 486-Ն որոշումների գործողությունը կասեցնելու մասին» n 827-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետում «2018» թիվը փոխարինել «2019» թվով.

2) որոշման 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ ելնելով Հայաստանի Հանրապետության տնտեսության և աշխատաշուկայի հետագա զարգացումներից՝

1) ըստ անհրաժեշտության ներկայացնել հիմնավոր առաջարկություններ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի N 493-Ն և N 486-Ն որոշումների գործողության կասեցման ժամկետը երկարացնելու վերաբերյալ.

2) մշակել և սահմանված կարգով ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել Հայաստանում օտարերկրացիների զբաղվածության կարգավորման՝ օբյեկտիվ իրավիճակից բխող և կարգավորման ամբողջականությունն ապահովող լուծումներ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: